

քը նոյնացնել, թէ Ատրնեբուհ ունէր երկրորդ անուն մը՝ Մուսավիեա։ Սահլի Մուսավիեա որդին է՝ որ Բաբակը Ալ-Աֆշինի կը տանի, եւ Տաբարիի վիպակութեան համաձայն՝ Ալ-Աֆշինէ 100,000 տիրահամ նուէր կը ստանայ, այսինքն 5,000 ոսկի դինար։ Այս դոմարին տեղ՝ Իպն Խալիքան սակայն միայն հաղար տիրահամ ստացուած կը նշանակէ։

Ե. - Պատրիկութիւնը դոյութիւն ունէր իբր տիրոջ եւ աստիճան՝ ո՛չ միայն Բիւզանդացւոց, այլ եւ Արաբներու մօտ։ Մասնաւորի համաձայն՝ Ալ-Աֆշին Սահլի տըւաւ պատուոյ պարեգօտ, պատրիկական թագ, ձի մը եւ զինքը ազատ ըրաւ հողատուրքէ։ Ուրեմն Սահլի պատրիկութիւնը արաբական ծագում ունի։

Զ. - Այս վերի վիպակութիւնը կարեւոր է նաեւ Եսայի որդի Յովսէփի Ստեփաննոսեանի (Իսա Իպն Եոսուֆ Իպն Իսթիֆանուս) անուան ճշգրտման համար։ Հոս առաջին անգամ կը ներկայանայ « Իպն Ուսթ Իսթիֆանուս », այսինքն՝ որդի Ուսթ Ստեփաննոսեան։ Ի՞նչ ծագումով եւ ի՞նչ նշանակութեամբ կոչում մըն է այս Ուսթը։ Դժբախտաբար կարող չեմ ծանօթութիւն մը աւելցնել։ Արդեօք արաբներուն կողմէ ազաւաղուած է անունը։ Մեզի ծանօթ է որ Եսայի Ստեփաննոսեան արաբներէն կոչուած է Եսայի Իպն Եոսուֆ, որ իսկապէս Յովսէփին արաբական հնչումն է։ Սակայն տեսանք նաեւ որ Իպն ալ-Ասիր Եոսուֆի տեղ ունի Եոնաս, որ կրնայ ծագած ըլլալ Եանուս՝ այսինքն Յովսէփէն ձեւէն։ Բայց հիմա ունինք Տաբարիի Եսայի Իպն Եոսուֆ՝ ծանօթ իբր Իպն Ուսթ Իսթիֆանուս։ Արդ կարելի չէ՞ որ Ուսթանէս անունը վերածուած ըլլայ Ուսթ Անէս-Եանուս փոփոխութեան։

Է. - Քանի մը մանրամասնութիւններ եւս Բաբակի մասին։ Անոր մահապատիժը կատարուեցաւ 14 Մայիս 838ին։ Իրեն կը վերագրուի 255,500 հոգիի մահ։ Իր մօտ գտնուող իսլամ կիներու եւ փոքրիկներու թիւը կը հաշուուի 7,600, ըստ Տաբարիի։

Բաբակի դաւակներէն 17 մահ է 23 աղջիկ ու հարս զերի ինկան Ալ-Աֆշինի ձեռքը։

Ալ-Աֆշին՝ Բաբակը ձեռք բերելուն համար ստացաւ պատուոյ պարեգօտ, թագ, դոմարներ ու 20 միլիոն տիրահամ կամ 100 հազար ոսկի դինար։ այս դոմարին կէսը իրեն համար, իսկ կէսն ալ բանակին բաշխելու համար։ Մասնաւորի մանրամասնօրէն կը նշանակէ Ալ-Մուսադիմ խալիֆայէն Ալ-Աֆշինի եղած նուէրները։

Ը. - Մենագրութեանս մէջ Կադանկատուացիէ յառաջ բերած էի 321ին դիպող ասպատակութիւնը «Սեւադա՝ աշխարհաւերն Տաճիկ, որոյ Աւառանչան անուն ճանաչէր»։ Սեւադա, ինչպէս տեսանք, Սիւնիք կ'ասպատակէր եւ հոն ալ ամրացած էր, երբ Սիւնեաց տէր՝ Վասակ կը հրաւիրէ Բաբակը եւ միասին Սեւադան կը վտարեն Սիւնիքէն։

Այս Սեւադան անտարակոյս նոյնն է Եսադուլի յիշած Սեւադա Իպն Ասրիւլ-Համիտ Ալ-Ճահաֆի հետ, որ թէեւ Խալիֆային դէմ ասպատակէր էր եւ Հայաստանը կ'աւերէր, եւ սակայն Հայաստանի կառավարիչ նշանակուած արաբաց Իսա Իպն Ապի Խալլատ, որ Ատրպատականի մէջ պարտուած էր Բաբակէ, Սեւադային առաջարկեց Հայաստանի ոստիկանութիւնը։ Սեւադա մերժեց, եւ Իսա զայն պարտութեան մատնեց, մինչ Սեւադա՝ Վասակ Սիւնիի եւ Բաբակի միացեալ ոյժերէն կը վտարուէր Սիւնիքէն, ուր կ'երեւի թէ Սեւադա ինքզինքը Աղուանից տէր կը կոչէր (Աւառանչա կամ Առանչա)։

Կ'աւարտեմ մանր ծանօթութիւններս, այս առթիւ նշանակելով քանի մը չնչին վրիպակներ մենագրութեանս մէջ, հոս սրբագրելով զանոնք։

Էջ 14, թիւ 9 ծանօթութեան առաջին Տաբարիի տեղ պէտք է ըլլայ Բաբակի։ Էջ 22 Ա. եւ Բ. սիւնի վրայ 233 թուականը սրբագրէ 223։ Էջ 23, Բ. սիւն, Գաբաթայանիցի կարդա Գաբթայանիցի։ Էջ 25, Բ. սիւն, վարէն տող 10, տումարագրութեան կարդա տոմարագրութեան։

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐ

ԵՐԳԱՅԱՆՆ ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԱՐԱՐՈՎ

Գրեց

Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ

(Շար. տե'ս Բազմ. 1958, թ. 11-12, էջ 204)

ԶՈՐՈՐՈՐԴ ԱՐԱՐ

ՏԵՍԻԼ Ա.

(Բեմը կը ներկայացնէ Սասանեան արքունիքին դահլիճը, որ կը նայի Տիգրիսի վրայ։ Երկու դռներու առջեւ կանգնած են երկու սպառազէն սենեկապաններ, որոնք հագուած են հայ արքունիքի պահակներուն պէս։ Գահին վրայ բազմած է Արքայից Արքան՝ Շապուհ, արքայական քաղցր գլխուն վրայ. կը կրէ մեծ եւ լայն պատմուհան մը, հասնելով մինչեւ ծունկերը. ունի ծիրանի վարտիք, լայն եւ ծփուն խորշերով. մէջքին կապած է մոխր գօտին, չորս կարգ մարգարիտներով, ուսկից կախուած է պողովատիկ սուրը, ոսկեպատեմով. քիկունքներուն վրայ կը կրէ ամփոփուած եւ ծփուն մեկնոց մը. կօշիկները կը ծածկեն ամբողջ քաթը. երկգոմէ փոկ մը քաթին երկու կողմէն վեր կ'ելլէ եւ կը միանայ կօշիկին բերանը պրկող ուրիշ փոկի մը հետ։ Մատին վրայ կը կրէ վարագնկարագիր մատանին, որով կնիքը է աղ եւ հացի երդումը. ակննքներէն կախուած են մեծ եւ գեղեցիկ մարգարտէ օղեր. կը կրէ վարսերու գանգուրներ, կարն մօրուք մը՝ ընդելուզեալ ոսկիով։ Վարագոյրը բացուելուն՝ ներս կը մտնեն Զրադաշտ մոգպետը եւ Զրուան, աստեղագէտներու եւ գուշակներու պետը)։

ՇԱՊՈՒՀ. - Արքայական հրամանս կատարուած է։

ԶՐՈՒԱՆ. - Այո՛, մեծդ արքայ. արքունի պալատին մէջ հաւաքուած են բոլոր

կախարդները, աստեղագէտները ու գուշակները, որոնք իմաստութեամբ կը ճանչնան մարդու մը ծածուկ խորհուրդները եւ կը յայտնեն անոր վախճանը։

ԶՐԱԴԱՇՏ. - Ես վկայ եմ այս ճշմարտութեան։

ՇԱՊՈՒՀ. - Դուք գիտէք որ ես օրօրօցիս մէջ թագաւոր հռչակուած եմ. եւ 58 տարիներէ ի վեր կ'իշխեմ Արեաց եւ Անարեաց աշխարհներու վրայ։

ԶՐԱԴԱՇՏ. - Որոնց բաշխեցիր բարօրութիւն եւ երջանկութիւն։

ԶՐՈՒԱՆ. - Քու հայրդ, Միհր աստուած, քեզ փառքով եւ յաղթանակներով պսակեց։

ՇԱՊՈՒՀ. - (Գունաքափ) Բայց ես մըտախոհ եւ տխուր եմ։

ԶՐԱԴԱՇՏ. - (Շոգոփոքութեամբ) Արքայ քաջ, քու կեանքիդ պայծառ արեւը երբեք մար պիտի չմտնէ։

ՇԱՊՈՒՀ. - Յերեկները ահաւոր մտածութիւններ զիս կը շարժարեն, դիւերները անքուն կը լուսցնեն։

ԶՐՈՒԱՆ. - (Մեկուսի) Կարծես երեսէն թոյն կը կաթի։

ԶՐԱԴԱՇՏ. - Ո՞վ է այն անիծեալ արարածը որ յանդերձ է քու աստուածական քունդ խռովի։

ՇԱՊՈՒՀ. - Զրուան, դու կը կարծես թէ լուսապայծառ Միհրը զիս փառքով եւ յաղթանակներով պսակած է. բայց դուն չես տեսներ այն սուր փուշերը որոնք յաղթական պսակին մէջ ցցուած են։

ԶՐՈՒԱՆ. - Ասո՞ր համար է, արքայ քաջ, որ վարդ այտերդ ինկած կախուած են։ Կովկասէն մինչեւ Պարսից ծոցը, Պարսից ծոցէն մինչեւ Հնդկաց Ուկիանոսը քեզ կը ճանչնան աշխարհի վեհադոյն եւ հզօր ինքնակալը։

ՇԱՊՈՒՀ. - Բայց ամօթէս գետին կ'անցնիմ, երբ ամէն օր լուր կ'առնեմ որ թոյլ եւ անզօր Ժողովուրդ մը խիզախօրէն ճակատեր է մեր հզօր կայսրութեան բանակներուն դէմ։

ԶՐԱԴԱՇՏ. — Աստեղադէտ Ջրուան, գիտե՞ս թէ Արշակ եւ Վասակ քանի՞ ճակատամարտ չահեր են մեր անթիւ ու անհամար զոհերուն վրայ, որոնք պաշտպանուած էին հազարաւոր փղերով:

ԶՐՈՒԱՆ. — Փախստական գինուորէ մը իմացեր եմ թէ Վասակ Մամիկոնեան 30 ճակատամարտ չահեր է, եւ մեղի հաւատարիմ Մերուստան Արծրունին միշտ միաձի ճողոպրեր է:

ՇԱՊՈՒՀ. — Եթէ պատերազմը դեռ չարունակուի, հայկական թեթեւ սլաքներն չուտով Տիգրոնի գոներուն առջեւ կը ցցուի:

ԶՐԱԴԱՇՏ. — Բայց դու, արքայից արքայ, հպարտանալու անսպառ աղբիւր մը ունիս: Պարսիկ գինուոր մը չէ՞ր որ Տիգրոնի մէջ գետին փռեց Հռոմայեցւոց ամբարտաւան կայսրը:

ԶՐՈՒԱՆ. — Այո՛, իմ աչքին առջեւ էր որ երիտասարդ կայսրը իր վերջին շունչը փչեց՝ հողույ անմահութեան վրայ տրամախօսելով:

ՇԱՊՈՒՀ. — Իմ երկար թաղաւորութեան մեծագոյն պարծանքը կը մնայ հոռմէական արծիւը մահուան փողի տակ վերաւոր թողուլ: Բայց անոր փոքր դաշնակիցը, Հայաստան, եօթնդիմեան վիշապ մըն է, զոր չկրցայ մեռնել: Եւ ասիկա իմ թաղաւորութեանս մեծագոյն ամօթն է:

ԶՐԱԴԱՇՏ. — Յամառ եւ պնդալուսի ժողովուրդ է:

ՇԱՊՈՒՀ. — Զէնքի ուժով յաղթելէ յուսահատ, ձեռք առի նենդութիւնը: Հայոց արքունիքը զրկեցի իմ հաւատարիմ ծառաս, Ալանասղան իշխանը, որ խաբէութեամբ Արշակ թաղաւորը ծունկերուն առջեւ բերէ:

ԶՐՈՒԱՆ. — Արքայ քաջ, երգում արւի՞ր:

ՇԱՊՈՒՀ. — Այո՛, աղի եւ հացի երգումը, կնքած իմ վարադադիր մատանիովս: (Յոյց կու տայ ձեռքի մատանին):

ԶՐԱԴԱՇՏ. — Ահաւոր երգում, որուն եթէ դրժես՝ փոխանակ լոյսը ստեղծող

Միհրէ: որդին ըլլալու, զիշերային խաւարը ստեղծող Արհմի որդին կը դառնաս:

ԶՐՈՒԱՆ. — Դեռ աւելի սարսափեցուցիչ բան մը կայ. ով որ աղի եւ հացի երգումին դէմ ստէ, Չինրատ կամուրջէն ստուլթեան անդունդը պիտի գլորի... Եւ պիտի զրկուի Ահուրա-Մազդայի անուշակ փառքը տեսնելէ:

ՇԱՊՈՒՀ. — Դու մողպետ, եւ դու կախարդներու պետ, գիտցէ՛ք որ ես Միհրի որդին եմ. շատ անգամ ստեր եմ տուած երդումներու, եւ սակայն ատէպ մտքով երկինք կը յափշտակուիմ եւ կը լսեմ երկնային էակներու պար մը եւ երգը ներդաշնակ:

ԶՐԱԴԱՇՏ. — (Դողալով) Յանուն ճշմարտախօսութեան...

ՇԱՊՈՒՀ. — (Տառամբելով) Զիս սարսափեցնողը ոչ թէ գեւերու բնակարանն է, այլ Արշակ թաղաւորին յեղեղուկ նկարագիրը. նենդութեան եւ պարզամտութեան խառնուրդ մը, որ ինծի կատաղութիւն եւ դիմու պտոյտ կը պատճառէ:

ԶՐՈՒԱՆ. — Ո՛հ, անիծեալ թաղաւոր, որդի չարագործ Արհմի:

ՇԱՊՈՒՀ. — Երբ պատերազմներէն առաջ՝ Արշակ արքան Տիգրոն եկաւ, ինծի մեծարանքի ողջոյն ներկայացնելու, այնպէս պարզամիտ մարդ էր՝ որ զինքը շատ սիրեցի. բայց նա իր սրտին մէջ անարդեցիկ էր: Անոր հետ խաղաղութեան ուխտ կապեցի, եւ ինքը երգում տուաւ Աւետարանին վրայ՝ Բիւզանդիոնէն բաժնուելու եւ Տիգրոնի հետ կապուելու: Բայց յետոյ երդումը չպահեց: Ես անոր հազար բարեքներ խոստացայ, բայց նա փոխանակ բարեքի՝ չարիք հասցուց ինծի:

ԶՐԱԴԱՇՏ. — Կը յիշեմ որ Հայոց թաղաւորը իր երգումը Տիգրոնի ակեղեցիին երէցներուն առջեւ կատարեց:

ՇԱՊՈՒՀ. — Երբ իր երգումը ոտքի տակ առաւ, կանչեցի Տիգրոնի երէցները, եւ համարելով որ անոնք Հայոց թաղաւորին սուտ երգմանը կամակից են՝ մահապարտ հռչակեցի:

ԶՐՈՒԱՆ. — Ես ներկայ էի՝ երբ Մարի երէցը, անոնց զխաւորը, կուրծքը ծեծելով վրէժէ՝ թէ իրենք արդարութեամբ երգում ընել տուած էին թաղաւորին. բայց եթէ նա ստեց, նոյն Աւետարանը՝ Արշակը պիտի բերէ արքայից արքային ոտքը:

ՇԱՊՈՒՀ. — Ես անոնց ականջ չգրի եւ հրամայեցի որ այդ 70 երէցները գուրի մը քով փողոտուին, եւ անոնց աշակերտները սուրէ անցնել տուի: Իսկ Աւետարանը, որուն վրայ երգուաւ Հայոց թաղաւորը՝ շղթաներով կապեցի եւ դրի արքունի գանձարանիս մէջ:

ԶՐՈՒԱՆ. — Արժանի պատիժ:

ՇԱՊՈՒՀ. — Ականջս դուրս չ'ելլեմ Մարի երէցին պաղատանքը, զոր արձակեց դուրսն առնել, թէ մեզ սպաննել մի՛ տար, վասնզի ես գիտեմ որ նոյն Աւետարանը՝ Արշակ թաղաւորը քու ծունկերուդ առջեւ պիտի բերէ:

ԶՐԱԴԱՇՏ. — Մեծդ արքայ, Հայոց աշխարհէն ուրախ լուր մը չկա՞յ:

ՇԱՊՈՒՀ. — Կայ, բայց իմ պարտուած զէնքերուս ամօթը չի ջնջեր: Ալանասղան այս առաւօտ սուրհանդակ մը փութացուցեր էր ինծի՝ աւետելու համար թէ Արշակ, իր քաղցր լեզուէն խաբուելով, Տիգրոնի ճամբան բռներ է:

ԶՐՈՒԱՆ. — Կեցցէ՛ յաղթական Արքայից արքան:

ՇԱՊՈՒՀ. — Նենդութեան յաղթանակ: Արեան յաղթանակներու երգերը՝ դացէք լեցէք հայկական լեռներուն եւ դաշտերուն մէջ, որոնք կ'արձագանդեն. Շապուհ եւ Մերուստան միաձի ճողոպրեալ...:

ԶՐԱԴԱՇՏ. — Հայ չինականին բերին մէջ ալ անարդուած է աստուածակերպ Արքայից արքան:

ԶՐՈՒԱՆ. — Արհմի գեւերը թող բղիկ բղիկ ընեն Գողթան երգիչները:

ՇԱՊՈՒՀ. — Զրադաշտ եւ Զրուան, դուք որ պետութեան իմաստուն սիւներն էք, զիտէի որ իրաւասիրութիւնը սասանեան կառավարութեան ամէնէն յարգուած սկզբունքն է, որով ես օրինական

կ'ըլլամ եթէ պատժեմ մէկը՝ առանց դատելու: Արդ, քանի որ Մարի երէցը արդարութեամբ կորսուեցաւ եւ Արշակ թաղաւորը իմ ոտքերուս կու գայ, կ'ուզեմ գիտնալ թէ այսուհետեւ իր ուխտին եւ հնազանդութեան վրայ հաստատուն պիտի մնա՞յ: Եթէ այո՛, մեծարանօք պիտի դարձնեմ զինքը իր աշխարհը:

ԶՐԱԴԱՇՏ. — Իմաստուն խորհուրդ, արժանաւոր Միհրի որդւոյն:

ԶՐՈՒԱՆ. — Հրաման տուր, արքայ քաջ, որ մեկնինք. իմաստուններու ակումբը անհամբեր մեղի կը սպասէ, լսելու քու աստուածային խօսքերը:

ՇԱՊՈՒՀ. — Գացէք եւ շուտով պատասխանը բերէք:

ԶՐԱԴԱՇՏ. Եւ ԶՐՈՒԱՆ. — (Միաբերան) Յաւիտեան կեաց, աստուածորդի (կը մեկնին ձախակողմեան դռնէն):

ՏԵՍԻԼ Բ.

ՇԱՊՈՒՀ. — Ալանասղան մեծաբան է, չեմ վարժեր որ դուրս Արշակունին խաբուած ըլլայ իր հմայող լեզուէն եւ ուզէ ինծի հետ կապուիլ, ինչպէս հաւատարիմ ծառայ մը իր տիրոջ հետ: Իսկ եթէ բռնադատուած իմ ոտքս կու գայ, զիս կը դնէ ծանր տաղնապի մը առջեւ...: Ես Հայերը լաւ կը ճանչնամ. անոնք իրարու միմը կ'ուտեն, իրարու հետ կը կուրին, միշտ անգամ զիրար կը սպաննեն. բայց երբ իրենցմէ աստուած անձ մը օտարին ձեռքը մատնուի, այդ ատելի մարդը՝ իրենց համար կը դառնայ պաշտելի անձ մը: Եթէ ես Արշակ թաղաւորը պատժեմ, անոր բոլոր հակառակորդները ինծի դէմ կը միանան եւ կը ստեղծեն անդիմադրելի ոյժ մը: (Վերջին բառերը չաւարտած՝ Սուրբն պահակը, որ կեցած է բեմին ձախակողմեան դրան առջեւ, ներս կը մտնէ եւ պատկառանքով կը խոնարհի արքայից արքային առջեւ):

ՏԵՍԻԼ Գ.

ՍՈՒՐԵՆ. — Մեծագոր արքայ, արքունի հազարապետը քու նուստ ծառայիդ ձեռ-

քով կ'իմացնէ որ արքունիք հասած է Բու-
լանաց թագաւորին զեսպանը, որուն կ'ըն-
կերանան խումբ մը սպառազէն ձիաւոր-
ներ, ծանրաբեռնուած մեծազին նուէրնե-
րով:

ՇԱՊՈՒՀ. - (Գումաքափ) Երբ Բուլան
անունը կ'իմանա՞մ, ամբողջ մարմնովս կը
դողամ: Եւ ի՞նչ կ'ուզէ այդ զեսպանը:

ՍՈՒՐԷՆ. - Հազարապետը ըսաւ՝ որ
հետը բերած է Բուլանաց թագաւորին
սպառազէն եւ կ'ուզէ անմիջապէս տեսնել
արքայից արքան:

ՇԱՊՈՒՀ. - Ապահովապէս Արշակ թա-
գաւորին համար է: (Կը մեկնի՝ Սուրէնէն
առաջնորդուած):

ՏԵՍԻԼ Դ.

ԿԱՐԷՆ. - (որ կանգնած էր բեմին ա-
ջակողմեան դրան խորշին մէջ, կը ցատկէ
բեմին վրայ սարսափահար վիճակի մէջ)
Ես մատենան դունդին մէջ էի, երբ աստ-
ուածակերպ արքայից արքան սաշարուե-
ցաւ քուլան ձիաւոր խումբէ մը. ևս պիտի
սպաննուէր՝ եթէ օգնութեան չհասնէր
հայկական դունդ մը, որ փոթորիկի արա-
դութեամբ Միհրի որդին ազատելով, հա-
ցուց պարսկական բանակը:

(Սուրէն արդէն եկած բռնած է իր տե-
ղը, բեմին ձախակողմը, եւ լսած է Կարէ-
նի վերջին բառերը):

ՍՈՒՐԷՆ. - Կարէն, տեսնելու բան է
քուլան ուղղակիները, ամէնքն ալ կտրիճ
եւ զօրաւոր են, ունին բարձր հասակ եւ
վայելուչ դէմք:

ԿԱՐԷՆ. - Ծերունի հայրս, որ քուլա-
նաց երկրին հետ առեւտուր կ'ընէր, կ'ը-
տէր թէ քուլանները կը կառավարուին
խելացի օրէնքներով:

ՍՈՒՐԷՆ. - Իրենց թագաւորները Պար-
թեւ Պահլաւ տոհմէ են, եւ մօտաւոր ազ-
գական են Հայաստանի Արշակունի թա-
գաւորներուն: (Կը լսուին ոտքի ձայներ.
Սուրէն եւ Կարէն կը քաշուին իրենց ս-
վորական տեղերը: Ձախակողմեան դռնէն
ներս կը մտնեն Զրադաշտ եւ Զրուան՝ ու-
րախ տրամադրութեամբ):

ՏԵՍԻԼ Ե.

ԶՐԱԴԱՇՏ. - Այսչափ տարի է որ կայս-
րութեան մոզպետն եմ, յաճախ պալատ կը
մտնեմ ու կ'ելլեմ, բայց առաջին անգամն
է որ զեսպան մը կը տեսնեմ չըջապատ-
ուած այսքան բանակով:

ԶՐՈՒԱՆ. - Քուլանաց թագաւորը խո-
րադէտ մարդ է. կ'ուզէ արքայից արքան
սարսափի տակ պահել:

ԶՐԱԴԱՇՏ. - Բայց այս ո՞րքան շուտով
Արշակ թագաւորին Տիրոն գալու լուրը
հասած է այդ հեռաւոր աշխարհը:

ԶՐՈՒԱՆ. - Քուլանաց թագաւորները
բոլոր Արեւելքի երկիրներուն մէջ պաղտնի
լրտեսներ ունին, մանաւանդ Հայաստանի
մէջ, ուր կ'իշխեն իրենց ցեղակից Արշա-
կունի թագաւորներ: (Կը լսուին փողի եւ
քմբուկի ձայներ, որոնք կ'աւետեն Շա-
պուհի ժամանումը: Ներս կը մտնէ արքա-
յից արքան, խռովայնոյց եւ գումաքափ, եւ
կը բազմի գահին վրայ: Զրադաշտ եւ Զը-
րուան կը խոնարհին մինչեւ գետին, եւ կը
կանգնին Շապուհի դիմաց):

ՏԵՍԻԼ Զ.

ԶՐԱԴԱՇՏ. - (Ծանրախոհ) Արքայ քաջ,
յաւիտեան կեաց: Իմաստուններու ահում-
բը կենտրոն լուծեց:

ՇԱՊՈՒՀ. - Եւ ես ուրախ եմ:

ԶՐՈՒԱՆ. - Եթէ Հայոց թագաւորը ար-
ժանի ըլլայ քու լուսապայծառ դէմքը տես-
նելու և ինքզինքը նկատէ քու ծառաներէդ
մէկը, անոր խօսքերուն մի՛ հաւատար:
Այս է, Տէր արքայ, իմաստուն ահումբին
առաջին վճիռը:

ՇԱՊՈՒՀ. - Իմաստուն վճիռ...: Ար-
շակ շատ անգամ ինքզինքը ծառայ դաւա-
նած է, բայց միշտ զիս խաբեր է:

ԶՐԱԴԱՇՏ. - Ահա, Տէր արքայ, եր-
կորդ վճիռը: Դու Հայոց թագաւորը
քովդ պահէ. ապա հրաման տուր որ ար-
քունի դահլիճին յատակին կէսը ծածկեն
հայկական հողով, եւ անոր վրայ ցանեն
հայկական ջուր: Դու կը բռնես Արշակ

թագաւորի ձեռքէն, եւ կը տանիս նախ
այն տեղը՝ ուր կայ պարսկական բնիկ հո-
ղը, եւ անոր հարցումներ կ'ուղղես: Դար-
ձեալ կը բռնես անոր ձեռքէն, եւ կը տանիս
հայկական հողին վրայ, եւ Արշակին խօս-
քերը կը լսես: Այսպէս ընելով՝ դու պիտի
գիտնաս թէ Հայոց թագաւորը պիտի պա-
հէ՞ իր երդումը, թէ ոչ: Եթէ հայկական
հողին վրայ խիստ կերպով խօսի քեզի
հետ, գիտցիր, արքայ քաջ, որ Արշակ՝
Հայոց երկիրը հասնելուն պէս՝ նոյն խիստ
լեզուով պիտի խօսի քեզի հետ, նոյն պա-
տերազմը պիտի նորոգէ քեզի դէմ, նոյն
ճակատամարտները պիտի մղէ, նոյն թըշ-
նամութիւնը պիտի պահէ, ինչպէս առաջ:

ՇԱՊՈՒՀ. - Ի՞նչ լուսաւոր խորհուրդ-
ներ:

ԶՐՈՒԱՆ. - Արքայ քաջ, իմաստունե-
րու ահումբը ցոյց կու տայ ուրիշ հմայիչ
միջոց մըն ալ, որ բոլորովին պիտի մեր-
կացնէ Հայոց թագաւորին ծածուկ խոր-
հուրդներուն ծաղիքը:

ՇԱՊՈՒՀ. - Անհամբեր եմ իմանալու:

ԶՐՈՒԱՆ. - Կը հրամայես որ պատ-
րաստուի արքայական ընթրիք մը, եւ երբ
դու եւ Արշակ ձեմելէ կը դադրիք, ճաշ-
կերոյթ մը վու տաս ի պատիւ Հայոց թա-
գաւորին, եւ Արշակի ոտքին տակ հայկա-
կան հող դնել կու տաս, վրան հայկական
ջուր ցանուած: Դու կը իմես պարսկական
գինին. իսկ Հայոց թագաւորին առջեւ դը-
նել կու տաս Գողթնի աղնիւ եւ զօրաւոր
գինին: Երբ Արշակ արբենայ եւ զուար-
թանայ, սիրտը լեզուին վրայ կ'ելլէ, ու
համարձակ և անկեղծօրէն կը յայտնէ իր
դադանի մտածութիւնները:

ԶՐԱԴԱՇՏ. - Հայկական հողը, հայկա-
կան ջուրը եւ հայկական գինին՝ մէկ մէկ
թակարդներ են, որոնց մէջ պիտի բռնուի
Հայոց ուխտադրութ թագաւորը:

ՇԱՊՈՒՀ. - (Զուարթացած) Գոհութիւն
քեզ, ամենակալ Ահուրամազդա, որ լու-
սաւորեցիր իմ իմաստուններուն կաճառը,
եւ զիս ազատեցիր սպանող մղձաւանջէ մը:
Կը հրամայեմ որ խելոյն հաւատարիմ
մարդիկ տաճիկ ուղտերով մեկնին Հայաս-

տան, բերելու համար հող, ջուր եւ Գող-
թան գինի:

ԶՐՈՒԱՆ. - Արքայ քաջ, այդչափ հեռու
երթալու պէտք չկայ: Արքունի պալատին
շուրջ կը բնակին մեծահարուստ հայ վա-
ճառականներ, որոնք միշտ տաճիկ ուղտե-
րով իրենց տուները բերել կու տան հայ-
կական հող, ջուր եւ գինի: Ասոնք ամէնէն
մոլեռանդ Հայերն են, որ պարսից հետ եր-
բեք չեն խառնուիր, եւ այնպէս կ'ապրին՝
որ կարծես թէ հայ հողին վրայ ըլլան:
Մարդիկ զրկէ, որ անոնցմէ մէկուն տու-
նէն բերեն այդ երեք հմայող զօրութիւն-
ները:

ԿԱՐԷՆ. - (Աջակողմեան դռնէն բեմին
վրայ կու գայ ու մինչեւ գետին կը խոնար-
հի Շապուհի առջեւ) Արքայ քաջ, յաւի-
տեան վեաց. հազարապետը կը հաղորդէ
թէ Արանասղան իշխանը հասած է արքու-
նիք, հետը բերելով Հայոց Արշակ թագա-
ւորը, եւ... ուրիշ մարդ մը, որուն աչ-
քերը... կրակ ու բոց կ'արձակեն:

ՇԱՊՈՒՀ. - Ի՞նչ է այդ մարդուն ա-
նունը:

ԿԱՐԷՆ. - Որչափ իմացայ՝ վասակ կը
կոչուի:

ՇԱՊՈՒՀ. - (Գոհ եւ ուրախ) Փառք քեզ,
Ահուրամազդա, Մասանեանց անհաշտ թըշ-
նամին, Արշակի չար ոգին ոտքերուս առ-
ջեւ բերիր: (Դառնալով պառակին) Շու-
տով ներս մտցուր Արանասղան Պահլաւը:

ԿԱՐԷՆ. - (Մինչեւ գետինը խոնարհե-
լով) Ծառայ եմ քու աստուածային հրա-
մանիդ: (Կը մեկնի աջակողմեան դռնէն):

ԶՐԱԴԱՇՏ. - Արանասղան, Արշակի եւ
վասակի հետ՝ միասին բերեր է Հայաս-
տանի բախտն ու փառքը:

ԶՐՈՒԱՆ. - Եթէ երբեք ունեցած է:
(Կարէն ձախակողմեան դռնէն ներս կը
մտնի Ալանասղանը):

ՏԵՍԻԼ Է.

ԱԼԱՆԱՍՂ. - (Ժպտաղէմ) Իմ խորին
մեծարանքներս հօր ինքնակալին ծունկե-
րուն առջեւ կը դնեմ: Խորագէտ լեզուս
յաջողեցաւ համոզել Արշակ թագաւորը,

որ ինքզինքը քեզի ծառայ համարելով, անհամբեր կը սպասէ քու լուսապայծառ դէմքդ տեսնելու:

ՇԱՊՈՒՀ. — Ալանասդան, երբեք պիտի չմոռնամ քու ծառայութիւնդ: Արշակին հետ բերի՞ր նաեւ Փառանձեմ թագուհին եւ հայ նախարարներու կիները, ինչպէս քեզի պատուիրեր էի:

ԱԼԱՆԱՍՂ. — (Շուքարած) Փառանձեմը սիրենցի է, ինձմէ աւելի ճարտար լեզու ունի: Հիմա թագապահ հրատարակուած է, եւ պատրաստ է պատերազմի դաշտ իջնելու: Բայց երբ պարսկական սահմանը մտանք՝ Արշակ թագաւորին նամակ մը գրել տուի, որով կը հրամայէ որ Փառանձեմ եւ նախարարներու կիները անյապաղ Տիգրոն դան:

ՇԱՊՈՒՀ. — Ես այնքան թանկագին պարգեւներ դրկեր էի Արշակին. անոնց փոխարէն ինքը ի՞նչ նուէրներ բերաւ:

ԱԼԱՆԱՍՂ. — (Ամօթեալ) Լեզուս առաջ չեթար խօսելու: Եւ ոչ իսկ ասեղ մը: Ես համոզուած եմ որ Հայոց թագաւորը խելքը կորսնցուցած է: Երբ ճամբայ պիտի ելլէինք, հրամայեց որ իր սպիտակ ջորիին վրայ բեռնեն Մասիսի հող, Արաքս գետի ջուր եւ Գողթան գինին:

ԶՐԱԴԱՇՏ. — Օրհնեա՛լ ըլլաս, Ահուրամադդա, որ այդ սքանչելի դադափարը ներշնչեր ես Միհրի լոյսէն զրկուած անհաւատ թագաւորին:

ԱԼԱՆԱՍՂ. — Երբ հեղնելով՝ Արշակին ըսինք թէ ասո՞նք են այդ պարգեւները զոր պիտի տանիս արքայից արքային, պատասխանեց թէ ասոնք պատուական գանձեր են, որոնց յարգը ոչ դուն եւ ոչ արքայից արքան գիտէ, այլ միայն ես եւ վասակը:

ՇԱՊՈՒՀ. — (Զուարթութեամբ) Ո՞րք են այժմ այդ պատուական գանձերը:

ԱԼԱՆԱՍՂ. — Անոնք կը գտնուին արքունի դուռը, ուր անոնց արթուն պահապաններ կեցած են Արշակ եւ վասակ, չորջապատուած արքունի թիկնապահներով:

ՇԱՊՈՒՀ. — (Շատ ուրախ) Ալանասդան, դու եւ Զրուան կը մնաք հոս, եւ ձեր աչ-

քերուն տակ, այս դահլիճին կէսը ծածկել կու տաք հայկական հողով, վրան ցանել կու տաք Արաքսի ջուրը, յետոյ անոր վրայ փռել կու տաք կանաչ դորդ մը, ի նշան Հայոց դաշտերու մշտադաւար կանաչութեան: Իսկ յատակին միւս մասն ալ պարսկական հողով եւ ջուրով ծածկել կու տաք, վրան ալ վարդադոյն դորդ մը, ի նշան մեր դոյնդոյն վարդերուն:

ԱԼԱՆԱՍՂ. եւ ԶՐՈՒԱՆ. — (Միաբերան) Արքունի հրամանը պիտի կատարուի բառ առ բառ:

ՇԱՊՈՒՀ. — Երկրորդ հրամանս այս է. երբ մեր խթեւելը դադրի այս դորդերուն վրայ, պատրաստել պիտի տաք ճիւղ ընթրիք մը, ճիւղ այն յատակին վրայ, ուր ես եւ Արշակ ձեմելով չըջած ենք:

ԱԼԱՆԱՍՂ. եւ ԶՐՈՒԱՆ. — (Միաբերան) Արքունի հրամանը աչքերնուս վրայ:

ՇԱՊՈՒՀ. — Երբ գալարափողը հնչէ՝ ես եւ Արշակ թեւ թեւի մտած ներս պիտի գանք: Դուք ամէնքդ դուրս կ'ելլէք: Բայց ընթրիքին՝ դուք Զրադաշտ եւ Զրուան ներկայ պիտի գտնուիք: Փորձի գերագոյն ժամն է:

ԶՐՈՒԱՆ. — Իմաստուն որոշում:

ԱԼԱՆԱՍՂ. — Արքայ մեծ, ընթրիքի ժամուն ո՞ր պիտի բաղմեցնեմ Հայոց Արշակ թագաւորը: Մեր օրէնքին եւ սովորութեան համաձայն՝ Արքայից Արքան եւ Հայոց թագաւորը կը բաղմին նոյն տախտին եւ նոյն դահուն վրայ:

ՇԱՊՈՒՀ. — Այսօր վը ջնջեմ պարսկական այդ օրէնքը: Իւրաքանչիւր կոչնական կը բաղմեցնէք իրենց պատուոյ աստիճաններուն համաձայն: Իսկ Արշակ թագաւորը կը բաղմեցնես ամենայեւոր տեղը, ցած աթոռով մը, ճիւղ այն յատակին վրայ ուր ցանուած է հայկական հողն ու ջուրը: Եւ առջեւ կը գնես Գողթան գինին:

ԱԼԱՆԱՍՂ. — Կէտ առ կէտ պիտի կատարուի քու աստուածային հրամանը:

ՇԱՊՈՒՀ. — Երթանք, մոզպետ, մտնենք արքունի ատուղանը, որ երկրպագեմ վաճառական սուրը կրակին. իսկ դու թըրթրուն ձայնով երգէ Ահուրամադդայի

փառքը: (Կը մեկնին ձախակողմեան դռնէն, մինչ Ալանասդան եւ Զրուան կ'ես մէջքով խոնարհած կ'ըլլան):

ՏԵՍԻԼ Ը.

ԱԼԱՆԱՍՂ. — Սուրէ՛ն, առաջ անցիր: (Սուրէն կու գայ բեմին վրայ) Կ'երթաս արքունի դուռը, եւ իմ կողմէս կ'ըսես Արշակ թագաւորին՝ որ քեզի յանձնէ հետը բերած պատուական գանձերը: Նա հիմա անոյշ եւ խոնարհ մարդ մըն է, անմիջապէս կը կատարէ խնդրանքս:

ՍՈՒՐԵՆ. — Կը հնազանդեմ, իշխան: (Կ'երթայ):

ԱԼԱՆԱՍՂ. — Կարէ՛ն, (Կարէն առաջ կու գայ) դնա՛, արքունի պարտէզէն բեռ մը հող բեր եւ չթացայտ աղբիւրէն սափոր մը ջուր. յետոյ անցիր արքունի կապուտակ երկնագոյն հովոցը, եւ բեր այն գինիէն՝ զոր Արքայից Արքան սովոր է ամէն օր խմել իր ոսկեղէն բաժակով:

ԿԱՐԵՆ. — Անմիջապէս: (Կը մեկնի):

ԶՐՈՒԱՆ. — Հիմա որ գլուխ գլխի մեք, ըսէ ինձի, Ալանասդան, Արշակ թագաւորը քու ճարտար լեզուէ՞դ հմայուած եկաւ արքայից արքային ոտքը, թէ ստիպուեցաւ, բռնադատուեցաւ:

ԱԼԱՆԱՍՂ. — (Ամօթեմ կարմրած) Շիտակը խօսելով, աստեղագէտ, իմ հնարագիտութիւնս եւ խարէութիւնս չէին որ Արշակ թագաւորը Արքայից Արքային ոտքը բերին, այլ անոր խռովարար նախարարները: (Այս խօսքերը չվերջացած՝ կը հասնին Սուրէն եւ Կարէն, բեմին ետեւ ձգելով իրենց բեռները):

ՏԵՍԻԼ Թ.

ՍՈՒՐԵՆ եւ ԿԱՐԵՆ. — (Միաբերան) Իշխան, հրամանը կատարուած է:

ԱԼԱՆԱՍՂ. — Սուրէն, (ցոյց տալով յատակին չափը) հոս կը գնես հայկական հողը, վրան կը ցանես ջուրը. իսկ դու, Կարէն, յատակին մնացած մասը կը ծածկես պարսկական հողով եւ ջուրով: Պարսկական հողը կը ծածկէք վարդադոյն դոր-

դով, իսկ հայկականը՝ կանաչ դորդով: (Սուրէն եւ Կարէն անմիջապէս գործի կ'անցնին):

ԶՐՈՒԱՆ. — Ալանասդան, Արշակի նախարարները ի՞նչ տեսակ ճշուժ բանեցուցին:

ԱԼԱՆԱՍՂ. — (Մէկ կողմէն աչք մետելով Սուրէնի եւ Կարէնի վրայ) Անոնք կաշառուած եւ վայրագ մարդիկ հաւաքեւ էին պալատին շուրջ, որոնք բարձրաձայն աղաղակներով բռնադատեցին իրենց թագաւորը Տիգրոն երթալու, եւ Արքայից Արքային հետ խաղաղութեան եւ սիրոյ դաշինք կապելու:

ՍՈՒՐԵՆ եւ ԿԱՐԵՆ. — (Միաբերան) Ամէն ինչ կէտ առ կէտ կատարուած է:

(Ներսէն կը լսուի ոտքի ձայնը եւ ապա գալարափողի ձայնը. ներս կը մտնեն Շապուհ եւ Արշակ՝ քեւ քեւի մտած, եւ սիրալիր խօսակցութեամբ կը յառաջանան դէպի բեմ. Սուրէն եւ Կարէն կը քաշուին իրենց խորշերուն մէջ, իսկ Ալանասդան եւ Զրուան աջակողմեան դռնէն դուրս կ'ելլեն):

ՏԵՍԻԼ Ժ.

ՇԱՊՈՒՀ. — (Ուրախութեամբ կը բռնէ Արշակի ձեռքէն եւ կը բերէ պարսկական հողին վրայ) Ինչո՞ւ ինձի թշնամի եղար, Արշակ, թագաւոր Հայոց. ես քեզ որդւոյ մը պէս սիրեցի, եւ ուղեցի իմ աղջիկս քեզի կնութեան տալով՝ քեզ ինձի որդի ընել. դու ինձի խոստում տուիր, ապա կամովին ինձի թշնամի եղար, եւ չորս տարի է ի վեր ինձի դէմ վը պատերազմիս:

ԱՐՇԱԿ. — (Հեզ եւ խոնարհ ձայնով) Մեղա՛յ քեզ: Իմ աներս՝ Անդուլկ Սիւնի, հրապուրեց զիս, երկիւղ ձգեց մտքիս մէջ, եւ ես գիշեր ատեն քովէդ փախայ: Հիմա որ Ս. Աւետարանի վրայ տուած երդումս զիս քու առջեւ բերաւ, ըրէ ինչ որ կ'ուզես. ծառագ եմ, յանցաւոր եմ, մահապարտ եմ:

ՇԱՊՈՒՀ. — (Զուարթացած) Արքայ Արշակ, կը ներեմ քեզի, եւ հիմա դուն իմ փեսաս ես: Այժմէն հրաման կու տամ որ հարսնիքի հանդէսները ակսին: Քառասուն

օր, քառասուն զինքեր Արեայ աշխարհը պիտի ցնծայ փողի, սրինգի, թմբուկի եւ քնարի ձայներով. պետութեանս բոլոր զօրազորները, կուսակալները, մեծամեծները, իշխանները, մոզերն ու քաղաքաները քու եւ Ասթինէի դահերուն առջեւ ծունկի եկած՝ ձեզ պիտի փառաւորեն:

ԱՐՇԱԿ. - (Հեգախաւքոյ) Աշխարհի բոլոր թագաւորները նախանձով պիտի նային ինձի:

ՇԱՊՈՒՀ. - (Բռնելով Արշակի ձեռքէն կը տանի հայկական հողին վրայ) Արշակ արքայ, դու ոչ միայն չխղցիր Հոռմի հետ կնքած դաշինքը, այլ նաեւ հելլէն իշխանուհի մը կին առնելով, ուժգին սիրով սիրեցիր Հոռմայեցիները, իմ ոխերիմ թշնամիներս: Ուրախ եմ որ հիմա զիս կը սիրես:

ԱՐՇԱԿ. - (Բարկուքեամբ) Հեռացի՛ր ինձմէ, չարագործ ծառայ. ո՞վ փրկեց հայ Արշակունեաց սերունդը՝ Սասանեան կոտորածէն: Հոռմէական լեզէոններով եւ արծիւներով չէ՞ր որ Տրդատէս՝ հայ թագաւորութեան վերջին կայծը՝ Հոռմէն եկաւ ու բարձեցաւ իր նախնեաց դահին վրայ:

ՇԱՊՈՒՀ. - (Քմծիծաղով կը բռնէ Արշակի ձեռքէն եւ կը տանի պարսկական հողին վրայ) Գիտե՞ս թէ ո՛ւր հոգին փչեց Յուլիանոս կայսրը, քու հաւատարիմ դաշնակիցը:

ԱՐՇԱԿ. - (Հեգ եւ խոնարհ ձայնով) Ամբարտաւան կայսրը իր արժանաւոր պատիժը դտաւ: Արքայ մեծ, զիս համարէ քու ծառաներէդ մէկը, քու ոտքիդ հողը...: Աւելի կ'ընտրեմ մեռնիլ, քան քեզմէ բաժնուիլ:

ՇԱՊՈՒՀ. - (Բռնելով Արշակի ձեռքէն կ'անցնի հայկական հողին վրայ) Արժանի ես, Արշակ, իմ որդիս եւ փեսաս ըլլալու:

ԱՐՇԱԿ. - (Զայրացած) Մի՛ յոխորտար, սնապարծ սասանեան, դու այդ յաղթութիւնը շահեցար իմ անհեռատես զիւանսդիտութեան ւրեմէն: Եթէ ես իմ նետաձիգներովս ժամանակին հասած ըլլայի Տիգրոն, հոն զետին փռուողը ոչ թէ հոռ-

մայեցւոյ իմաստասէր կայսրը՝ այլ դուն պիտի ըլլայիր: Ես իմ ձեռքովս այրեցի Հայոց տունը, քեզի հաճոյ ըլլալու համար:

ՇԱՊՈՒՀ. - (Միշտ բռնած Արշակի ձեռքէն, կը բերէ պարսկական հողին վրայ) Արշակ, թագաւոր Հայոց, կ'ըսես թէ ես քու տէրդ եմ. բայց ծառայ մը ի՞նչպէս տիրող երեսին կը պիտայ՝ յոխորտացող եւ սնապարծ...: Բայց ես դարձեալ քեզի կը ներեմ, որպէս որդւոյ եւ փեսայի:

ԱՐՇԱԿ. - (Կը խոնարհի, կը բռնէ Շապուհի ոտքերը) Կը զղջամ ու կը ցաւիմ խօսքերուս վրայ. ես այլեւս քու ոտքիդ փոշին եմ:

ՇԱՊՈՒՀ. - (Կեղծ ուրախութեամբ) Այս զինքեր, երբ աստղերը պլպլան, պիտի կընքենք սիրոյ եւ հաշտութեան դաշինքը. Ասթինէն անքակտելի օղակը պիտի ըլլայ իմ եւ Հայոց թագաւորին միջեւ: (Դառնալով դէպի պահակները) Սուրէն, ներս վանէ՛ք Զրադաշտը, Զրուանը եւ Ալանասղան իշխանը: (Սուրէն, որ իր խորշին մէջ է, անմիջապէս կը մեկնի):

ԱՐՇԱԿ. - Նոր արշալոյս մը պիտի բացուի իմ կեանքիս աչունին մէջ:

ՇԱՊՈՒՀ. - Կարէն, արքայական տեղանը պատրաստէ: (Շապուհ՝ Արշակի ձեռքէն բռնելով բեմին առջեւ կը տանի, որպէսզի Արշակ չտեսնէ իր ոտքերուն տակ դրուելիք հողն ու ջուրը. ներս կը մտնեն Զրադաշտ, Զրուան եւ Ալանասղան):

ՏԵՍԻԼ ԺԱ.

ԶՐԱԴԱՇՏ. - (Գռնունակ սրտով) Արքայ, յաւիտեան կեաց. երբ աստուղանին մէջ աչնան տերեւի մը նման կը դողայի, մտածելով աղ եւ հացի սարսափելի երդումին վրայ, յափշտակուեցայ երկինք եւ Ահուրամազդայէն լսեցի անպատմելի բաներ...: (Զրադաշտի խօսած ժամանակ, Ալանասղան՝ Սուրէնի եւ Կարէնի հետ կը յարդարէ սեղանը, այնպէս՝ ինչպէս կարգադրուած էր):

ՇԱՊՈՒՀ. - (Ժպտաղէմ) Մոգսեր, դըլուխդ չուտով տաքցիր է:

ԶՐՈՒԱՆ. - Ամենազօր ինքնակալ, քու մէկ քաղցր ժպիտդ, քու մէկ ուրախարար խօսքդ մեր սրտերը անսահման հրճուանքով պիտի լեցնէ:

ՇԱՊՈՒՀ. - Այո՛, պետութեանս ամենամեծ աստղագէտ. Արշակ, Հայոց թագաւորը կը խոստանայ բաժնուիլ Հոռմայեցիներէն եւ սրտով ու հոգիով միանալ ինձի հետ: Այս զինքեր պատմական թուական մը պիտի ըլլայ Պարսկաստանի եւ Հայաստանի պատմութեան համար:

ԱԼԱՆԱՍՂ. - Արքայ մեծ, ընթրիքը պատրաստ է: (Շապուհ կը բազմի իր ոսկեղէն բարձր աթոռին վրայ: Ալանասղան՝ Զրադաշտն ու Զրուանը կը նստեցնէ Շապուհի հով. իսկ Արշակը կը բազմեցնէ սեղանին ծայրը, ցած ու խեղճուկ աթոռի մը վրայ. իսկ ինքը կ'երթայ կը նստի նոյն աթոռի մը վրայ՝ Շապուհի ձախակողմը):

ԱՐՇԱԿ. - (Ոտքի կանգնելով եւ Ալանասղանի ուղղութիւնով) Այդ է իմ տեղս՝ ուր դու բազմած ես. ոտքի ելիր այդ տեղէն, թող որ ես բազմիմ, որովհետեւ այդ տեղը մեր Արշակունեաց ազգին տեղն է. երբ իմ աշխարհը հասնիմ, սոսկալի վրէժ պիտի լուծեմ քեզմէ:

(Բոլորը միասին բարձրաձայն կը ծիծաղին):

ՇԱՊՈՒՀ. - (Քմծիծաղով) Արշակ, արքայ Հայոց, ինչո՞ւ կը խորխորաս. միթէ՞ դու չէի՞ր որ քեզ յանցաւոր, մահապարտ, ծառայ, իմ ոտքիս հողը եւ փոշին համարեցար: Ծառային տեղը հոն է՝ ուր դուն նստեր ես:

ԱՐՇԱԿ. - (Գողթան գինիէն գաւաթ մը խմելով) Կորսուէ՛ աչքէս, ծառայ անպիտան, որ տիրացեր ես քու տէրերուդ վըրայ: Քեզ հանգիստ պիտի չթողում, մինչեւ որ քեզմէ եւ քու որդիներէդ չլուծեմ Արտաւան թագաւորին վրէժը: Հիմա դուք ծառաներդ, ձեր նախկին տէրերուն բարձն ու պատիւը դրուեք էք. բայց ձեր օձիքը պիտի չթողում, մինչեւ որ այդ աթոռը

մեզի չվերագառնայ: (Կը խմէ Գողթան գինիէն երկրորդ գաւաթ մը):

ԱԼԱՆԱՍՂ. - (Ոտքի ելլելով) Արքայ մեծ, Արշակի լրբութիւնը չափ չունի: Այդ լեզուով խօսեցաւ ինձի հետ, երբ խորհուրդ վու տայի որ քու ոտքդ դար:

ԱՐՇԱԿ. - (Խմելով երրորդ գաւաթ մը) Լուէ՛, ցնորած պահլաւ: Երբ մեր ծառան տապալեց մեծազօր Արշակունեաց դահը, որ քանի մը անգամ հոռմէական հզօր կայսրութիւնը դողացուց, դուք, պահլաւ իշխաններդ, դարձաք անարդ ստրուկներ: Աղջկորդի, դու այսօր անոնց վարչապարներուն փոշին կը լղես, որպէսզի բարձի եւ պատուի հասնիս, մինչդեռ կրնայիր ժառանգ մը ըլլալ Արշակունեաց պանծալի դահուն: Արշակունեաց արժանապատուութիւնը ոտնակոխ եղած է եւ ես զայն վեր պիտի բարձրացնեմ: (Ամենքը ֆրֆջալի կը ծիծաղին):

ԱԼԱՆԱՍՂ. - (Ամօքահար) Տէր արքայ, Արշակ նախատինքներ կարգաց նաեւ Ասթինէին դիտուն:

ԶՐԱԴԱՇՏ. - Նախատինքներ՝ Ասթինէի դիտուն... որուն ցանկացան երկրի բոլոր թագաւորները...:

ԶՐՈՒԱՆ. - Ի՞նչպէս յանդգնեցաւ նախատել Արեայ օրիորդը, որուն երեսն անգամ տեսած է:

ԱՐՇԱԿ. - (Խմելով դարձեալ բաժակ մը Գողթան գինիէն) Եթէ խոշորագեղ Ասթինէն պարսից Անահիտն է, Փառանձեմ՝ Մշոյ դաշտին Բրկնադոյն չղարշով Աստղիկն է, հայկական գեղեցկութեան անթերի պատկերը: Եթէ իմ դաւաճան եւ մատնիչ նախարարներս զիս Տիգրոնի ճամբուն վրայ չնետէին՝ ես եւ Վասակ, մեր քաղաքուն եւ անվրէպ նետաձիգներով հասած կ'ըլլայինք Տիգրոն, կը կործանէինք սասանի յափշտակիչ տունը, եւ ես կը բազմէի իմ նախնեաց ոսկեղէն դահուն վրայ, իբր միակ եւ բացարձակ տէր. եւ Փառանձեմը կը հռչակէի թագուհի Հայաստանի եւ կայսրուհի Արեայ եւ Անարեայ աշխարհի: (Բոլորը բռնազրօսի կը ծիծաղին):

ՇԱՊՈՒՀ. - (Զայրոյթէն ինքնիքմէ

դուրս ելած) Սուրեն, մերկացուր Հայոց թագաւորը իր արքայական պատմութեան հետ հազուանցուր մահապարտի ճերմակ չապիկը: Իսկ դու, Կարեն, բեր արծաթէ շղթաներ եւ անցուր ձեռքերուն: (Սուրեն եւ Կարեն կը փութան հրամանը կատարելու):

ԱՐՇԱԿ. - (Վեհուքեամբ) Յաւիտեան ամօթ քեզի, սասանի զաւակ, որ փոխանակ զէնքով ինծի յաղթելու՝ սուտ երդումով ու նենգութեամբ զիս ուժաթափ կ'ընեն: (Յանկարծ Զրադաշտ տեղէն կը ցատկէ եւ անկիւն մը փառելով՝ աղօթք մը կը մըմնջէ. մինչ Սուրեն պահակը Արշակի պատմութեամբ համած եւ մերմակ շապիկը հագնուցուցած կ'ըլլայ. իսկ Կարեն պահակը արծաթէ շղթաներով կը կապէ Արշակի ձեռքերը՝ ուրիշ զինուորներու օգնութեամբ):

ՇԱՊՈՒՀ. - (Զայրացած ակնարկը կ'ուղղէ Զրադաշտի վրայ) Շրթունքներդ ի՞նչ կը մըմնջեն:

ԶՐԱԴԱՇՏ. - (Ողորմուկ ձայնով) Զինրատ կամուրջը արիւնս ւերակներուն մէջ սառնացուց:

ԶՐՈՒԱՆ. - Մի՛հր, աստուած ճշմարտախօսութեան:

ՇԱՊՈՒՀ. - Կը հրամայեմ որ Հայոց զահազուրկ արքան նետուի Խուժաստանի Անյուշ բերդին մէջ: Թող յանձնուի արքունի թիկնապահի մը. հրամանս իսկոյն դործադրուի: (Սուրեն բռնելով Արշակի ձեռքէն՝ կ'ուղղուի դէպի բեմի ձախակողմեան դուռը միւս զինուորներուն հետ):

ԱՐՇԱԿ. - (Ելլելէն առաջ դէպի Շապուհ դառնալով, բռնեցք օդին մէջ) Ոչնչացնող կայծակներ, ճակատագրի պէս անխնայ թող տեղան գլխուդ վրայ (դուրս կ'ելլէ):

ՏԵՍԻԼ ԺԲ.

ՇԱՊՈՒՀ. - (Յնցուած) Ի՞նչ ահաւոր եւ մոգիչ զօրութիւն ունին եղեր հայրենի հողը, հայրենի ջուրը, հայրենի դիմին: Այս զաղտնիքը յայտնելու համար՝ Հայոց թագաւորի մը պէտք կար...

ԶՐՈՒԱՆ. - Արդար վրէժի օրը մենաւ: ԶՐԱԴԱՇՏ. - Ոչ եւս է Սասանեանց չարագործներ: (Յանկարծ ներս կը մտնէ Կարեն ալալով զէմֆով):

ՏԵՍԻԼ ԺԳ.

ԿԱՐԷՆ. - (Մինչեւ գետին ծռելով) Արքայ քաջ, յաւիտեան կեաց. Տիկնանց Տիկինը նախնայի մը ձեռքով կ'իմացնէ որ կանանցը հասեր են Ալանաց, Աղուանից եւ Վրաց երկիրներէն բազմաթիւ հարձեր, նախնայներ, ներքիններ, ճոխ ընծաներով: Անոնց ընկերացող զենսականները չեն ուզեր մեկնիլ՝ մինչեւ որ քու ոտքերդ համբուրելու արժանի չըլլան:

ՇԱՊՈՒՀ. - Ի՞նչ տարբերութիւն կ'ուկասի այդ ժողովուրդներուն եւ հայ ժողովուրդին միջեւ: Անոնք առիթը չեն փախցներ իմ շնորհներս մուրալու. մինչ հալածու հայերը առիթ վը փնտռեն զիս հեղեղելու եւ նուաստացնելու:

ԱԼԱՆԱՍՂ. - Արքայ մեծ, հրաման տուր որ մենք ալ քեզի ընկերանանք. իմացած եմ որ Կովկասի այդ վայրերի ժողովուրդները ծիծաղելի տարազներ կը կրեն:

ՇԱՊՈՒՀ. - Հետեւեցէք ինծի: (Կը մեկնին. Սուրեն եւ Կարեն բարեւի կը կենան):

ՏԵՍԻԼ ԺԴ.

ՍՈՒՐԷՆ. - (Կանգնած բեմին ձախակողմեան դրան առջեւ) Ի՞նչ վեհաշուք կերպարանք ունէր Հայոց Արշակ թագաւորը: Թշուառութեան մէջ ալ վսեմ էր:

ԿԱՐԷՆ. - Արքայից Արքան իր ճակտին անջնջելի արատ մը քանց, զրթելով Պարսից նուիրական երգմանը:

ՍՈՒՐԷՆ. - Դու եւ ես, Կարեն, Պահալու ցեղին կը պատկանինք: Եթէ մեր նախնայորէրը Հայաստան ապաւինած ըլլային, ապահով եմ որ մեծամեծ պատիւներու եւ զանձերու տէր կ'ըլլայինք: Մենք ի՞նչ գործ ունէինք հոս, քանի որ մեր բնիկ թագաւորները հայ Արշակունիներն էին:

ԿԱՐԷՆ. - Կատաղութենէս ակոսներս կը կրճտեմ, երբ կը մտածեմ պահալու Ալանաստանի նենգամտութեան վրայ: (Կը լսուին գալարափողի երեք զարկեր. Սուրեն եւ Կարեն կը փառնին իրենց տեղերը. ներս կը մտնեն Շապուհ, Զրադաշտ, Զրուան եւ Ալանաստան):

ՏԵՍԻԼ ԺԵ.

ՇԱՊՈՒՀ. - Քանի որ Ահուրամազդան կանանցս լեցուց ամէն երկրաւոր բարիքներով, հիմա հանգիստ կրնամ դատել Վասակ Մամիկոնեանը:

ԱԼԱՆԱՍՂ. - (Գունաքափ) Մեծ արքայ, զարհուրելի մարդ է. առանց սուրի պէտք է ներկայանայ քու աստուածակերպ դէմքիդ:

ՇԱՊՈՒՀ. - Սուրեն եւ Կարեն, զինաթափ ըրէք Հայոց սպարապետը եւ այնպէս ներս մտցուցէք: (Սուրեն եւ Կարեն կը մեկնին):

ԶՐԱԴԱՇՏ. - Վասակի դատաստանը պէտք է կտրուի այնպիսի խստութեամբ՝ որ ամբողջ Հայաստանը ցնցուի: (Սուրեն եւ Կարեն ներս կը մտնեն Վասակը, եւ իրենց կը փառնին իրենց սովորական տեղերը):

ՏԵՍԻԼ ԺԶ.

ԶՐԱԴԱՇՏ. - (Մեկուսի) Հասակով դաժան, բայց աչքերուն մէջ շանթ ու փայլակ:

ԱԼԱՆԱՍՂ. - Մահուան ահեղ հրեշտակ մըն է:

ՇԱՊՈՒՀ. - Աղուէս, դու էիր որ այսքան յոգնեցուցիր մեզ: Դուն ա՞յն ես որ քան յոգնեցուցիր պարսիկները ջարդեալայնափ տարիներ պարսիկները ջարդեցիր: Հիմա ի՞նչպէս պիտի ազատիս ձեռքէս: Աղուէսի պէս պիտի աստկեցնեմ քեզ:

ՎԱՍԱԿ. - (Խրոխտաբար կեցած Շապուհի առջեւ, դեռ աւելի կը մօտենայ անոր, ձեռքը կարկառելով) Հիմա աղուէս կ'երեւամ քեզի, հը՞... սակայն մինչեւ հիմա առիւծ էի:

ԶՐՈՒԱՆ. - Յիշէ որ ահեղ Արքայից

Արքային առջեւ կանգնած ես, որուն մէկ ակնարկը քեզ շանթահար կ'ընէ:

ՎԱՍԱԿ. - Շապուհ, արքայ պարսից, երբ ես Վասակն էի՝ ազգասէր եւ տիրասէր առիւծ մըն էի: Կը յիշե՞ս այն օրը երբ սուրի մէկ հարուածով կտրեցի քու ախոռապետ իշխանին գլուխը, որովհետեւ նա յանդգներ էր իմ թագաւորս տեսնելուն՝ տեղէն չջարժիլ, մտնողը ոչինչ մը համարելով. քաղաքավարութեան ոչ մէկ նշան ցոյց չտուաւ, թշնամանց ալ. Այծերու թագաւոր - ըսաւ պարսկերէն լեզուով - եկուր այս խոտի խուրճին վրայ նստէ:

ՇԱՊՈՒՀ. - Այո՛, կը յիշեմ, դովեցի քու տիրասիրութիւնդ եւ պատուեցի ալ: Բայց դու այսօր իմ աչքիս՝ թղուկ մըն ես:

ՎԱՍԱԿ. - Երբ Վասակն էի, հսկայ էի քու աչքիդ. մէկ ոտքս մէկ լերան, եւ միւս ոտքս ուրիշ լերան մը վրայ դրած էի: Երբ ալ ոտքիս վրայ կը կըթնէի՝ աջ լեռը գետին կ'անցնէր. Երբ ձախիս վրայ կը կըթնէի՝ ձախ լեռը գետին կ'անցնէր:

ՇԱՊՈՒՀ. - Որո՞նք են այդ լեռները:

ՎԱՍԱԿ. - Մէկը դու, միւսը Բիւզանդիոնի կայսրը. մենք ձեզի աղէկ խրատ գիտցանք տալ՝ երբ Ներսէս Հայրապետի խորհուրդներուն մօտիկ կ'ընէինք: Հիմա որ անոր օրհնութիւնը մեր վրայէն գնաց եւ Աստուած մեզ ձեռքէ թողուց, հիմա բաց աչքերով մենք մեզ խորխորատ ձրգեցինք. ի՞նչ կ'ուզես՝ ըրէ:

ՇԱՊՈՒՀ. - Կ'ուզեմ որ քու մորթդ հանեն, խոտով լեցնեն եւ Անյուշ բերդի մէջ Արշակի դիմաց կախեն:

ՎԱՍԱԿ. - (Տօգունած) Անարգ մահ...:

ՇԱՊՈՒՀ. - (Բերկրութեամբ) Վասակ, մահուան անաչառ հրեշտակը կը դողացնէ՞ քեզ:

ՎԱՍԱԿ. - (Խրոխտաբար) Ո՛չ, Սասանեան. Մամիկոնեան մը մահուան այնքան վարժած է՝ որքան դուն ոճիրներուն: Ես կը դողամ, որովհետեւ Մամիկոնեաններու մահուան անկողինը պատերազմի դաշտն է: Մամիկոնեանները օրինադիրք մը ունին, պատերազմի թշնամիի դէմ, յօժարութեամբ մեռնիլ Հայաստանի համար,

հայ ընկերութեան համար, քան հոս անասունի մը պէս սատկիլ: Թէեւ շատ յանդուգն յառաջ վը նետուէի, այնուհանդերձ ինծի բաժին ինկաւ անարդ մահով մեռնիլ: Եւ ասիկա իմ սաստկագոյն կսկիծս է:

ՇԱՊՈՒՀ. - Սուրէն, դուք տար Հայոց սպարապետը եւ յանձնէ արքունի թիկնապահ գունդի մը, որ օրն ի բուն քալելով հասցնէ Անյուշ բերդ: Հոն թող մորթը հանեն: (Սուրէն առաջ գալով կը բռնէ վասակը եւ կը սկսի դանդաղօրէն առաջ երթալ):

ԱԼԱՆԱՍՂ. - (Հեգնութեամբ) Լուր զրկէ վաղէս կայսեր՝ որ դայ եւ քեզ Արքայից Արքայի ձեռքէն ազատէ:

ՎԱՍԱԿ. - Շնթող պահաւ, քու տէրդ զիտէ թէ Հայաստան կոնակ չունի. չի նշարեր անոր ետեւ ծածկուած Հռոմէական ինքնակալութեան հրեշտակ առիծը, որ վախ կ'ազդէ նոյնիսկ երբ քնանայ:

ՇԱՊՈՒՀ. - Հիմա դնա Արշակի հետ յաղթանակէ յաղթանակ:

ՎԱՍԱԿ. - Երկու քաջեր կ'արժեն հազարներ:

ԶՐՈՒԱՆ. - Արքայ քաջ, դեռ աւելի ծանր պատիժ մը տալու էիր այդ լիբրին:

ՎԱՍԱԿ. - (Դեռ դուրս չելած) Հայաստան գիտաւոր եւ զօրաւոր Սամսոն մըն էր. դուք, պարսիկ մեծամեծներ, քանի մը մատնիչ եւ դաւաճան հայ իշխաններու ձեռքով անոր մագերը կտրել տուիք: Բայց վաղը անոր մագերը դարձեալ պիտի բռնանին, եւ այնպէս ուժով պիտի ցնցէ սասանեան պետութեան սիւները, որ իրենց հիմերուն վրայ փլչին: (Սուրէնի հետ դուրս կ'ելլէ):

ՇԱՊՈՒՀ. - (Մտախոհ) Եթէ գոռոզ Մամիկոնեանը այսքան կատաղի է օտար հողի վրայ, հապա ի՞նչ պիտի ըլլար եթէ հայկական հողի եւ ջուրի վրայ կանգնած ըլլար:

Վ ա ր ա գ ո յ ր

(Շարունակելի)

• Գ Ր Ա Ն Օ Ս Ա Կ Ա Ն •

ՅՈՒՅԱԿ ԶԵՌԱԳՐԱՅ ԱՆԿԻՒԻՒՅՑ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՈՒՅ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ: Կազմեց Բարդէն Աթոռակից Կաթողիկոս Կիւլէսէրեան: Թղթակազմ, Բաղաձալ, Էջ ԺԳ + 1518. Կազմողին եւ մեկեմասին նկարներով: Անթիլիաս, 1957: Գին՝ 5 տոլար:

Ամէն անգամ որ նոր հրատարակուած ձեռագրաց ցուցակ մը կը ստանամ՝ սիրտս յուզումով կը լեցուի. եւ ի՞նչպէս չյուզուիլ՝ երբ կը տեսնես ճիշդ մը եւս մեր դարաւոր գանձերէն մաս մըն ալ այսպէս տրւապարեալ ցուցակներով յաւերժացնող: Ոեւէ մէկը որ գիտակից է այն ահաւոր կորուստներուն՝ որոնց ենթակայ եղած է մեր ձեռագրական գանձատունը եւ դեռ կը գտնուի կորսուելու սարսաղաղեցիկ սպառնալիքին տակ, կ'ըսեմ ոեւէ մէկը որ ասոր գիտակից է՝ յուզումով կը լեցուի ամէն մեծ ու փոքր ձեռնարկի առթիւ, որ ուղղակի կամ անուղղակի պատճառ կ'ըլլայ մեր այս անգնահատելի ժառանգութեան գոնէ մէկ կոտորակին փրկութեան:

Տպագրութիւնը կատարուած է խնամքով եւ թուղթը ընտիր է, ինչ որ շատ կենսական է նման մնայուն արժէքով կարեւոր գործի մը համար:

Գործին սկիզբը կայ կարճ եւ սակայն շահեկան ներածական մը՝ Գր. Պողարեանէ: Այս ներածականէն կ'իմանանք, որ Բարդէն Սրբազան այս ցուցակը պատրաստած է 1909-1913 չրջանին, երբ Գաղատիոյ առաջնորդ էր: Բարեբախտաբար ձեռագիր ցուցակը 1913ին Այնթապ կը բերէ եւ հոն ալ կը մնայ, մինչ Սրբազանը Միացեալ Նահանգներ կ'անցնէ: Վերջապէս միշտ մեր ձեռագիրներուն վիճակուած անհաւատալի ողիսականով մը ձեռագիրը կը փրկուի եւ տպագրութեան կը յանձնուի:

Թող ինծի ներուի գիտել հոս ներածականի մասին, որ հայ ձեռագիրներու եւ

յիշատակարաններու փրկութեան (հրատարակութեամբ) գործին մէջ մեծարժէք դեր կատարած են Երուանդ Լալայեան, Փիրղալէմեան եւ Սրուանձտեանց Սրբազան:

Յոյսով պիտի սպասենք Բարդէն Սրբազանի Ղալաթիոյ Մատենադարանին ձեռագրաց ցուցակին հրատարակութեանը, ինչպէս նաեւ Տոքթ. Յ. Թօփճեանի Արմաշի վանքին ձեռագրաց ցուցակին, եթէ վերջինս փրկուած է եւ Անթիլիաս կը գտնուի: Կը խնդրենք որ օր առաջ տպագրութեան յանձնուի նաեւ Փառէն Եպիսկոպոս Մելգոնեանի ձեռագրաց ցուցակը՝ Կիպրոսէն Անթիլիաս փոխադրուած ձեռագիրներուն, եւ արդէն Անթիլիաս գտնուածներուն հետ:

Անկիւրիոյ ձեռագրաց այս ցուցակը կը պարունակէ Կարմիր Վանքին պատկանող 309 գրչագիր, որոնցմէ 100ը ԺԸ. եւ ԺԹ. դարու ընդօրինակութիւններ եւ գործեր են: Ցուցակիս մնացեալ 14 ձեռագիրները Անկիւրիոյ չրջանին մէջ գտնուող անհատներու եւ եկեղեցիներու գրչագիրներն են, որոնցմէ երկու հատը նոյնպէս ԺԸ-ԺԹ. դարու գրչագիրներ են:

Առ հասարակ Անկիւրիոյ Կարմիր Վանքին ձեռագիրները վատ պահուած, մեծ մասամբ խոնավութենէ, աղտէ, փոշիէ, անխնամութենէ քայքայուած, փճացած վիճակ մը ունին: Մարդկային վանտալութիւնն ալ իր աւերները գործած է: Կերեւայ թէ ձեռքեր գրչագիրներու մէջէն կըտրեն հաներ են ինչ որ շահեկանութիւն կրնար ունենալ՝ յիշատակարան, պահպանակ, նա մանաւանդ մանրանկար, խորանաղարդ, լուսանցաղարդ: Այս անասելի ոճրագործութեանց եւ ականատես եղած եմ գրեթէ մեր ամէն հաւաքումներուն մէջ: Միւս թարեանները առ հասարակ իրենց ունեցած գրչագիրներուն տէր եղած են, ինչպէս որ այժմ կը ներկայանան: Սակայն եւ հանդիպած եմ մկրատուած գրչագիրներու մեր միւս վանքերուն մէջ: Երբեք պիտի չմոռնամ այն սրտի ցաւը՝ զոր զգացի Նոր Զուղայի վանքին հաւաքման մէջ տեսած բազմաթիւ մագաղաթեայ եր-

կաթագիր Կիլիկեան գրչագիրներուն՝ զարդէ, նկարէ կտրատեալ սահմակեցուցիչ վիճակը: Այս աւերը դեռ կը շարունակուի մեր կարգ մը անպաշտպան եկեղեցական գանձատուններու մէջ պահուած ձեռագիրներուն վրայ, ինչպէս օրինակ Թաւրիկի Սր. Աստուածածին եկեղեցոյն 1311էն Աւետարանին, որուն մեծարժէք մանրանկարները 1924էն քիչ առաջ կորուստուելու եւ Փարիզ ծախուելու են:

Այս հրատարակուած ցուցակին մասին հոս կ'ընեմ քանի մը պատահական նկատումներ:

Թիւ 25, Ամիրտովլէթի Աւգուստ Բժշկութեանը 1496էն վերջ գրուած է, քանի որ գրիչը Մարութա դպիր Ամասիացի՝ ծանօթ է արդէն իր մէկ Խորհրդատետրով (Վիեննայի Կայսերական Մատենադարանի), գրուած 1645ին, Զամոսցա Սր. Աստուածածնի հովանուոյն տակ:

Թիւ 204ը գրուած պէտք է ըլլայ 1615 - 1638ի միջեւ ասին մը, ի Կ. Պոլիս, ուր կը գտնուէր Թոխաթցի Միքայէլ գրիչը, որմէ բազմաթիւ ձեռագիրներ հասած են մեզի, սակայն ոչ նախ քան 1615 գրեալ:

Թիւ 249ը գրուած չի կրնար ըլլալ 1501ին: Գրիչը Աստուածատուր քահանայ ծանօթ է Երուսաղէմի Ս. Յակոբէն ԺԷ. դարու առաջին կիսուն, որմէ ունինք քանի մը գրչութիւններ:

Թիւ 307 ձառնի Ժամանակը հաւանաբար 1370ի տեսները ըլլալու է: Գրիչ եւ ծաղկող Յովհաննէս Ալինախ Եպիսկոպոս՝ ծանօթ է ինծի ուրիշ գրչութեամբ մը, 1370էն, կատարուած Երզնկայի Թիւ աւանին եկեղեցոյն մէջ: (Տես իմ Երիզա եւ Եկեղեցաց Գաւառ: Ա. Հատոր, էջ 291): Իրն է Վենետիկի Թիւ 187 Աւետարանը:

Թիւ 303ը իրապէս խիստ մեծարժէք ձեռագիր մը պիտի ըլլար՝ եթէ կտրատած չըլլային ձեռագիր Աւետարանին (1255էն) մանրանկարները: Մարտ Գունդատապլի համար գրուած այս Աւետարանը ծաղկուած եւ մանրանկարուած է եղեր մեծատաղանդ եւ անդուգական Կոստանդին ծաղկողէ, Կիլիկիոյ դպրոցին մեծագոյն վար-